

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ը՝ որպես օտար լեզուների դասավանդման կարևորագույն գործիքներ

Առարկա՝ Գերմաներեն

Կատարող՝ Անտոնյան Արփինե

Դպրոց՝ Գեղամավանի Ա.Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց

ՄԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....	5
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	12
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ.....	16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	20
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արդյունավետ ուսուցում կազմակերպելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և միջոցներ: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն պայմանավորված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ:

Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ սովորողը կամա թե ակամա դառնա ուսումնական գործընթացի մասնակից: Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչից պահանջվում է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց իրականացմանն ուղղված հնարների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Ժամանակակից տեխնոլոգիաները փոխում են գիտելիքներ ձեռք բերելու հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելաոճը: Ավելին, տեխնոլոգիաները սովորողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ:

Ներկայումս հանրակրթական դպրոցներում, մասնավորապես օտար լեզուների դասավանդման պրոցեսում, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառման խնդիրն ամենաարդիականներից է: Կյանքի տարբեր ոլորտներում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների արագ ներգրավումը պահանջում է վերջիններիս վրա հիմնված կրթական համակարգի նոր մոդելի ձևավորում, մշակում: Խոսքը մարդու ստեղծագործական ներուժը բացահայտելու, կարողությունները

զարգացնելու, ինքնակատարելագործումն ու պատասխանատվությունը կարևորելու համար անհրաժեշտ պայմաններ ու միջավայր ստեղծելու մասին է:

Օտար լեզուների և մասնավորապես անգլերենի ուսուցումը հանրակրթության անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է: Դժվար է գերազնահատել օտար լեզուների ուսումնասիրության անհրաժեշտությունը և դրանց կիրառական նշանակությունը՝ որպես հաղորդակցման, ճանաչման, ինքնադրսևորման միջոց: Օտար լեզուների իմացությունը կարևոր է նաև առօրյա կյանքում, միջանձնային և միջմշակութային շփումների ընթացքում: Այս առումով առաջնային պայման է պատշաճ մակարդակով օտար լեզուների՝ հատկապես որպես միջազգայնորեն հաստատված լեզուների տիրապետումը: Տրամաբանական է, որ ներկայումս աշխարհի քաղաքակիրթ երկրներում օտար լեզվի դասավանդումը դրված է շատ լուրջ հիմքերի վրա, և այժմ նույնիսկ ոչ թե երկլեզվությունը, այլ բազմալեզվությունն է կրթության համակարգում շրջանառվող առանցքային հասկացությունը: Եվ որպեսզի հնարավոր լինի հասնել իրական արդյունքների, այսինքն սովորողը ձեռք բերի կայուն գիտելիքներ, զարգացնի կարողություններն ու հմտությունները և կարողանա դրանք իրական կյանքում կիրառել, պետք է հաշվի առնել տարբեր գործոններ, այդ թվում նաև ճիշտ մեթոդի ընտրությունը, որը խթանող դեր է կատարում ուսուցման և ուսումնառության գործընթացում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ը՝ որպես օտար լեզուների դասավանդման կարևորագույն գործիքներ:

Խնդիրները՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Ուսումնասիրել ուսուցման ժամանակակից մեթոդները :
- Ներկայացնել ՏՀՏ-ը՝ որպես օտար լեզուների դասավանդման կարևորագույն գործիքներ :

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսուցման մեթոդը բարդ և բազմակողմանի հասկացություն է, ինչն առաջին հերթին պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Այն իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ Ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչո՞ւ սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա): Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման նպատակը և վերջնարդյունքը: Այսպիսով, կարող ենք ասել, որ ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր: Յուրաքանչյուր ուսուցիչ դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առաջ[1].

- Ինչպե՞ս հաջող պլանավորել դասը
- Ինչպե՞ս հաջող իրականացնել դասը
- Ինչպե՞ս կանխատեսել արդյունքները
- Ինչպե՞ս հասնել նպատակներին
- Ինչպե՞ս վերլուծել հաջողություններն ու բացթողումները:

Այս խնդիրների իրականացման համախի ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն:

Ի՞նչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է (metodos), որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ճանապարհ, ուղի: Գիտական գրականության մեջ մեթոդն ունի բազմաթիվ սահմանումներ:

Սահմանումների բազմազանության և առատության մեջ, այնուամենայնիվ, առկա են որոշակի ընդհանրություններ: Այսպես, համարյա բոլոր սահմանումներում մեթոդը բնութագրվում է որպես նպատակին հասնելու միջոց, գործիք կամ ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն և այլն: Եթե փորձենք ընդհանրացնել և բնութագրել մեթոդը, ապա կարող ենք ասել, որ այն ուսուցչի ու աշակերտի համագործակցությունն է ուսումնական միջավայրում, նրանց համատեղ գործունեությունն է՝ միտված ուսումնական նպատակների իրականացմանը և հասնելու վերջնարդյունքին:

Ուսուցիչը թեպետ ազատ է մեթոդների ընտրության հարցում, բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել կամ լինել ինքնանպատակ: Այսինքն, բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է, այլ առաջին հերթին՝ առկա մեթոդական ողջ պաշարի կիրառմամբ հասնել ուսուցման նպատակների իրականացմանը:

Պայմանականորեն ուսուցման մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ ավանդական և նոր կամ ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են[2].

- աշակերտը նյութը սովորում է՝ ինչ-որ բան կատարելով. մասնակցելով որոշակի գործընթացի,
- աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը,
- աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,
- աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցության կարողություններ,
- նյութի իրացման ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը,
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Այսպիսով, մեթոդները կարելի է բաժանել երեք խմբի՝ պասիվ, ակտիվ և ինտերակտիվ:

Մանկավարժության մեջ պասիվ ուսուցման մեթոդները համարվում են ամենաանարդյունավետը և հանգում նրան, որ սովորողները հանդես են գալիս

պասիվ ունկնդրի դերում: Պասիվ դասերի օրինակներ՝ դասախոսություն, հարցում, թեստ, փորձարկում և այլն: Որոշ ուսուցիչներ, չնայած պասիվ ուսուցման բոլոր թերություններին, նախընտրում են հենց այս մեթոդը, քանի որ այն հեշտ է պատրաստել ու իրականացնել: Սակայն այս մեթոդը համարվում է քիչ էֆեկտիվ: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի հաղորդումն է[4]:

Արդի մանկավարժության մեջ գլխավոր նպատակն է ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասիվ ունկնդրողի դերը փոխարինվի ակտիվ մասնակցի դերով, ինչի շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման նկատմամբ դրական ազդակներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության բացահայտում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Ակտիվ մեթոդները հիմնված են դասավանդող - սովորող համագործակցության վրա, այսինքն դասավանդողը և սովորողը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար սովորողները պետք է մտածեն, ստեղծագործեն: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես դասավանդողի և սովորողի միջև, այնպես էլ իրենց՝ սովորողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցական հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ զարգանում է սովորողի խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու

համար, սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրություններ: Սրանք այն մեթոդներն են, որոնց կիրառման դեպքում սովորողի գործունեությունը ձեռք է բերում արդյունավետ. ստեղծագործական, որոնողական բնույթ: Ուսուցման ակտիվ մեթոդներից են դիդակտիկական խաղերը, որոշակի իրադրության վերլուծությունը, պրոբլեմային խնդիրների լուծումը, մտազրոհը, ուսուցումն ըստ քայլաշարի (ալգորիթմ) և այլն:

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «interփոխադարձ», «act-գործել» բառերից[3]:

Ինտերակտիվ ուսուցումը երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում սովորողները համագործակցում են ոչ միայն դասավանդողի, այլև միմյանց հետ: Ակտիվ և ինտերակտիվ ուսուցման գաղափարը ուսանողի ուշադրության կրթական և ճանաչողական մտածելակերպի ակտիվացումն է: Ինտերակտիվ ուսուցման էությունը այն է, որ կրթական գործընթացը կազմակերպվում է այնպես, որ գրեթե բոլոր ուսանողները ներգրավված լինեն ուսուցման գործընթացում, նրանք հնարավորություն ունեն հասկանալ և մտածել իրենց գիտելիքների մասին: Մեկ չինական առակում ասվում է. «Ասա ինձ, և ես կմոռանամ, ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, ներգրավիր ինձ և ես կհասկանամ»: Այս խոսքերով արտացոլվում է ինտերակտիվ ուսուցման էությունը: Ինտերակտիվ մեթոդներ օգտագործելիս սովորողը դառնում է լիարժեք մասնակից ուսուցման գործընթացին, իսկ ուսուցիչը պատրաստի գիտելիքներ չի տալիս, բայց խրախուսում է սովորողներին ինքնուրույն որոնել, գտնել: Դասերի ավանդական ձևերի համեմատությամբ ինտերակտիվ ուսումը փոխում է ուսուցչի և ուսանողի փոխհարաբերությունները: Ուսուցչի

գործունեությունը զիջում է սովորողի գործունեությանը, և ուսուցչի առաջադրանքը դառնում է իրենց նախաձեռնության պայմանների ստեղծումը:

Այսպիսով, ժամանակակից կրթության հիմքում ընկած են հետևյալ մոտեցումները[5,6].

1. Զարգացնող ուսուցում
2. Սովորողակենտրոն ուսուցում
3. Հաղորդակցական ուսուցում
4. Կոլեկտիվ ուսուցման համակարգ (CSE)
5. Համատեղ ուսուցում (թիմային, խմբային աշխատանք)
6. Նախագծային ուսուցման մեթոդներ

Զարգացնող ուսուցման տեսությունը ուսումնառության տեսության և կրթության պրակտիկայի ուղղություններից է, որը բովանդակությամբ, մեթոդներով ու կազմակերպման ձևերով ուղղված է սովորողների ֆիզիկական, ճանաչողական և բարոյական ունակությունների զարգացմանը նրանց պոտենցիալ հնարավորությունները և այդ զարգացման օրինաչափությունները օգտագործելու միջոցով:

Սովորողակենտրոն ուսուցման հիմքում ընկած է այն համոզումը, որ ուսուցումը տեղեկատվության պարզ փոխանցում չէ: Այն ընդգծում է սովորողների ակտիվ մասնակցությունը ուսուցման գործընթացին, սովորողների կողմից տեղեկատվության յուրացումն ու սեփական գիտելիքի կառուցումը, ուսումնառություն բացահայտումների միջոցով: Սովորողին հնարավորություն է ընձեռվում տեղեկա-տվությունը և գաղափարները քննության ենթարկել, վերլուծել, ձևափոխել, խորհել դրանց նշանակության մասին, դիտարկել դրանք հակադիր տեսանկյուններից, հիմնավորումներն ամրապնդելու համար կառուցել դրույթների համակարգ, և այդ կառույցների վրա հենվելով՝ գալ որոշակի դիրքորոշման: Ինչպես նշում է Ջ. Բրուները «...այսօր բավարար չէ երեխաներին բացատրել, թե ինչ անեն, օրակարգում այն հարցն է, թե ինչ են մտածում իրենց արածի մասին և ինչու են դա անում»[10]:

Արդի ժամանակաշրջանում օտար լեզվի ուսուցման հաղորդակցական կոմպլեքսային մնում է առանցքային հասկացություն համարյա բոլոր մեթոդական համակարգերում: Ակնհայտ է, որ հաղորդակցական ունակությունների առավելագույն զարգացումն այն հիմնական, հեռանկարային, բայց և ոչ դյուրին խնդիրն է, որ ծառանում է օտար լեզուների ուսուցիչների առջև: Հաղորդակցման ուսուցումն օտար լեզվի դասավանդման գործնական ուղղվածության գործընթաց է, որի ընթացքում ուսուցման նպատակը (լեզվի ուսուցումը որպես հաղորդակցման միջոց) և նպատակին հասնելու միջոցը (խոսքային գործունեությունը) գործում են համատեղ: Կոլեկտիվ ուսուցման կառուցվածքային հիմքը յուրաքանչյուրը յուրաքանչյուրի հետ փոխազդեցության ձևն է, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել համընդհանուր համագործակցության ու փոխօգնության վրա հիմնված ուսուցման գործընթաց: Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական նպատակներն ու խնդիրներն իրագործում է մյուսների օգնությամբ՝ միաժամանակ օգնելով մյուսներին իրագործել իրենց խնդիրներն ու նպատակները: Այստեղ արդեն, ի տարբերություն ինտերակտիվ մեթոդների, աշակերտների համագործակցությունը չի սահմանափակվում միայն համատեղ քննարկումներով: Աշակերտների միջև փոխազդեցությունը կազմակերպվում է փոխուսուցման, համատեղ ուսումնասիրությունների, փոխստուգման, փոխվարժանքի և այլ նմանատիպ նպատակներով:

Համատեղ ուսուցում ասելով հասկանում ենք թիմային, խմբային աշխատանք, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու, ապրումակցելու: Դասավանդողն ինքը պետք է տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությունը: Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային

համակարգի ձևավորման վրա Օտար լեզուների ուսուցման գործընթացում սովորողներին ակտիվացնելու ուղիներից է նախագծային մեթոդը, երբ ուսանողն ինքնուրույն պլանավորում, ստեղծում, պաշտպանում է իր նախագիծը, այսինքն՝ ակտիվորեն ներգրավված է հաղորդակցման գործընթացում:

Նախագիծը սովորողներին հնարավորություն է տալիս արտահայտելու իրենց սեփական գաղափարները ստեղծագործական մտածված ձևով, որը հարմար է նրանց՝ պատրաստելով կոլաժներ, պաստառներ, հայտարարություններ, հարցազրույցներ և հետազոտություններ անցկացնել, անհրաժեշտ մեկնաբանություններով մոդելներ ցուցադրել, նկարագարումներով տարբեր վայրեր այցելելու պլաններ կազմել[8]:

Նախագծի մեթոդաբանության կիրառումը թույլ է տալիս ստեղծել հետազոտական, ստեղծագործական մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր ուսանող ներգրավված է ակտիվ ճանաչողական գործընթացում՝ հիմնված համագործակցության մեթոդաբանության վրա: Այն օգնում է զարգացնել լեզվական և ինտելեկտուալ կարողությունները, լեզու սովորելու կայուն հետաքրքրությունը և ինքնակրթության անհրաժեշտությունը: Ժամանակակից դպրոցում նախագծային մեթոդի կիրառումը օտար լեզուների ուսումնասիրությունը խթանելու ամենահզոր խթաններից է, ամենաստեղծագործական գործունեությունը, քանի որ բոլոր սովորողները ներգրավված են նախագծի վրա՝ անկախ իրենց կարողություններից և լեզվի մակարդակից:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում ունեն իրենց կարևոր նշանակությունը, որոնք ուղղված են կրթության որակի բարձրացմանը: Ուսուցման մեթոդների ընտրությունը փոխվում է ժամանակին համընթաց, և ՏՀՏ-ների ներդրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու ուսուցման բոլոր բաղադրիչները: Ուսուցման գործընթացում ՏՀՏ-ի ներդրումը հանգեցնում է էական փոփոխության՝ ավանդական մեթոդները փոխարինելով ժամանակակից մեթոդների, հնարների, համադրելով ավանդական ու ժամանակակից մեթոդները և այլն: ՏՀՏ-ները ուսուցման արդյունավետության բարձրացման հնարավորություն են ստեղծում թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների համար: ՏՀՏ-ների կիրառմամբ ուսուցիչն արագ կողմնորոշվում է, թե աշակերտները որ հարցերին պատասխանելիս են դժվարացել, և ըստ այդմ կազմակերպում է դասի հետագա ընթացքը[7]:

ՏՀՏ-ների կիրառմամբ աշակերտը ձեռք է բերում թե՛ տեխնոլոգիական, թե՛ առարկայական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Նա ունի նոր նյութը ամրապնդելու հնարավորություն՝ կատարելով անսահմանափակ թվով առաջադրանքներ: ՏՀՏ-ների կիրառումը խթանում է աշակերտի՝ սովորել սովորելու կարողությունը: Նա կարող է տեսական նյութը սովորել ինքնուրույն, հայթայթել իրեն հետաքրքրող և անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն: Աշակերտին տրվում է ժամանակը կառավարելու ճկունություն: Նա կարող է առաջադրանքները կատարել իրեն հարմար ցանկացած ժամի և ցանկացած վայրում, առանց որևէ սահմանափակման:

ՏՀՏ-ների կիրառումը խթանում է աշակերտների ուսումնական դրդապատճառները, բարձրացնում ուսումնական գործընթացի արդյունավետությունը, նպաստում սովորողների ճանաչողական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացմանը, հարստացնում ուսուցման մեթոդները, միջոցները և հնարները:

SZS բաղադրատարրերը, ըստ դիդակտիկական ուղղվածության, կարելի է առանձնացնել հետևյալ խմբերի:

1. Նյութեր, որոնք նախատեսված են ուսումնական նյութի նախնական ծանոթության, արդյունավետ ընկալման համար (համակարգչային տեքստեր, լուսանկարներ, տեսասկավառակներ):

2. Էլեկտրոնային դասագրքեր, կիրառական ծրագրերի և թեստերի փաթեթներ, որոնց դիդակտիկական հիմնական գործառույթներն են սովորողների գիտելիքների ամրապնդումն ու ստուգումը:

3. Վիրտուալ լաբորատորիաներ և համակարգչային լսարաններ, որոնցում իրականանում են ուսումնասիրվող գործընթացները: Այդ միջոցների դիդակտիկական հիմնական նշանակությունը սովորողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումն է:

4. Մասնագիտական գործունեության ավտոմատացված համակարգերը և կիրառական այն ծրագրերը, որոնք ուսանողների կողմից կարող են օգտագործվել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տարբեր աշխատանքներում, իրականացվում է որպես ազատ հետազոտություն[9]:

SZS բաղադրատարրերի վերը դասակարգված խմբերի գործառութային նշանակությունը համապատասխանում է սովորողների իմացական գործունեության կազմակերպման փուլերի հիմնավորված հաջորդականությանը՝ ընկալում, գիտելիքների իմաստավորված յուրացում և ամրապնդում, անձնական փորձի ձևավորում (կարողություններ, մասնագիտական հմտություններ), հետազոտական ու որոնողական գործունեություն:

SZS-ների կիրառմամբ հնարավոր է յուրաքանչյուր երեխայի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերել, պլանավորել և համակարգել աշխատանքը: Մա առավելություն է դիտվում ուսուցման ավանդական ձևերի համեմատությամբ: Դա ուսումնական նյութի անհատական ընկալման, ընտրության հնարավորությունն է, նրա յուրացման ժամանակահատվածի անհատական բաշխումը, նյութի յուրացման արագության կարգավորումը ըստ սովորողի ընդունակությունների ու հնարավորությունների: Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիական

միջոցները դասավանդողի և սովորողի հարաբերությունները դարձնում են օպերատիվ, արդյունավետ ու մատչելի: Այնուհանդերձ նշենք, որ անհատական ուսուցման իրականացման գործընթացում չեն ձևավորվում ուսումնական պարապմունքների խմբային ձևերի կազմակերպման ժամանակ ձևավորվող հատկանիշներ՝ հաղորդակցական և թիմում աշխատելու կարողություններ, փոխօգնություն, աջակցություն, հանդուրժողականություն, համակեցություն և խմբի համար պատասխանատվություն կրելու կարողություն:

Էլեկտրոնային ուսուցման համակարգերը, որոնք կառուցված են մուլտիմեդիական տեխնոլոգիաների հիման վրա, ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են: Հատկապես այս պարագայում է լիարժեքորեն իրականանում դասավանդման մեթոդիկայի հին, բայց ժամանակով ստուգված սկզբունքը՝ լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել: Ժամանակակից գրաֆիկական խմբագրիչները թույլ են տալիս ստեղծել իրական օբյեկտների առաջին կարգի 3-D մոդելներ: Ուսուցիչն ու սովորողն այսօր հնարավորություն ունեն վիրտուալ շրջայցեր կատարել աշխարհի պատկերասրահներով, օգտվել էլեկտրոնային արխիվների, կատալոգների և գրադարանների նյութերից: Համակարգչային գրաֆիկայի, անիմացիայի, կենդանի տեսապատկերման, ձայնի համակցված օգտագործումը եզակի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրվող նյութն առավելագույնս ընկալելու դիտողական տեսքով, դարձնելով այն ավելի հասկանալի ու հիշելի: Դա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ սովորողը պետք է յուրացնի մեծ ծավալի տեղեկատվություն:

S2S զարգացումները նպաստում են տեղեկատվական հեռահաղորդակցմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է հեռավար ուսուցման կիրառման հնարավորությունների արդյունավետ իրականացմանը: Ինտերնետային գլոբալ համացանցը ապահովում է հսկայական ծավալով տեղեկատվության մատչելիություն Երկիր մոլորակի ամբողջ տարածքում[9]:

S2S գործիքների, որպես կրթության նոր ձևերի կանխամտածված միջոցների գրագետ օգտագործմամբ, կարող են լուծվել մի շարք կարևոր դիդակտիկ խնդիրներ՝

- նախ և առաջ բարելավել ուսուցման գործընթացը, դասի անցկացման մեթոդները,
- զգալիորեն բարձրացնել սովորողի ինքնուրույն աշխատանքի մակարդակը, նրանց ինքնուսուցման արդյունավետությունը,
- ակտիվացնել սովորողի ուսուցման գործընթացը հետազոտական, որոնողական գործունեության ուղղությամբ,
- նպաստել սովորողների ճանաչողական, վերլուծական, քննադատական կարողությունների զարգացմանը,
- ազդել սովորողի մոտիվացիայի ձևավորման վրա,
- ապահովել շարունակական և ճկուն ուսուցման գործընթացը,
- ստեղծել տարբեր ուսումնական իրավիճակներ, որոնցում սովորողը նյութը սովորում է խաղային ձևով,
- ապահովել ուսումնական նյութի յուրացման անհրաժեշտ մակարդակը,
- իրական սարքավորումների վրա հեռահար փորձեր անցկացնել,
- տարբեր տեսակի տեղեկատվության հաղորդակցման և տեղեկատվության ընտրության ու համակարգման հմտությունների և կարողությունների ձևավորման համար և այլն:

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

SՀՏ-ները էներգետիկ ազդեցություն են ունենում ողջ ուսումնական գործընթացի, ինչպես նաև սովորողների կրթության վրա, քանի որ դրանք արմատապես փոխում են գիտելիքների փոխանցման սխեման և դասավանդման մեթոդները: Բացի այդ, կարելի է նշել, որ կրթական համակարգում SՀՏ-ի ներդրումը ոչ միայն ազդում է կրթական տեխնոլոգիաների, նաև հանգեցնում է նորերի ձևավորման գործընթացին:

Կրթության մեջ օգտագործվող SՀՏ գործիքները (ըստ Ի.Վ. Ռոբերտի) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցներ են, որոնք օգտագործվում են ուսումնամեթոդական, նորմատիվ-տեխնիկական և ուղեցույց նյութերի հետ միասին, որոնք ապահովում են դրանց մանկավարժական օգտագործման օպտիմալ տեխնոլոգիաների ներդրումը:

Ցանկացած կրթական համակարգի տեղեկատվական միջավայրի հիմնական SՀՏ գործիքը *անհատական համակարգիչը* կամ *նոութբուքն է*, որոնք հանդիսանում են տեղեկատվության մշակման ունիվերսալ սարքեր[11]:

Տպիչ - թույլ է տալիս թղթի վրա գրանցել ուսանողների կամ ուսուցչի կողմից ստեղծած տեղեկատվությունը: Շատ դպրոցական ծրագրերի համար գունավոր տպիչը ցանկալի է:

Պրոյեկտոր - արմատապես բարձրանում է ուսուցչի աշխատանքի տեսանելիության մակարդակը, և աշխատանքի արդյունքները ամբողջ դասարանին ներկայացնելու հնարավորությունը:

Վիզուալ և ձայնային տեղեկատվության մուտքագրման սարքեր (սկաներ, ֆոտոապարատ, տեսախցիկ, աուդիո և վիդեո ձայնագրիչ), որոնք հնարավորություն են տալիս ուղղակիորեն ներառել շրջակա աշխարհի ինֆորմացիոն պատկերները կրթական գործընթացում

Լոկալ և գլոբալ ցանցերը թույլ են տալիս ավելի արդյունավետ օգտագործել առկա տեղեկատվության, տեխնիկական և մարդկային ռեսուրսները, ապահովել ընդհանուր մուտք դեպի համաշխարհային տեղեկատվական ցանց:

Բնտերակտիվ գրատախտակը համակարգչին միացված սենսորային էկրան է: Համակարգչից պրոյեկտորը պատկեր է փոխանցում գրատախտակին: Պարզապես պետք է հավել գրատախտակի մակերեսին համակարգչի վրա աշխատելու համար: Բնտերակտիվ գրատախտակների համար նախատեսված հատուկ ծրագրաշարը թույլ է տալիս աշխատել տեքստերի և առարկաների, աուդիո և վիդեո նյութերի, ինտերնետային ռեսուրսների հետ, ձեռագիր նշումներ անել անմիջապես բացված փաստաթղթերի վրա և պահպանել ինֆորմացիան:

Պլանշետներ - փոքր սարքեր են, որոնք բնութագրվում են նոութբուքի և բջջային հեռախոսի միջև միջանկյալ չափսերով: Որոշ կենտրոններ դրանք ներառել են որոշ առարկաներում աշխատելու համար՝ շնորհիվ դիզայնի, ավելի հեշտ և ավելի ինտուիտիվ, քան նոութբուքերը:

Թվային գրքեր: Դրանք թվային տեքստային բովանդակությամբ գործիքներ են, որոնց համար պետք է օգտագործվի էկրան: Դասարանում այն հաճախ օգտագործվում է բովանդակության այլ տեսակների հետ միասին, ինչպիսիք են տեսալսողական կամ առցանց բովանդակությունը:

Դասարանում դրա ընդգրկումը իր հետ տարաձայնություններ առաջացրեց կրթական միջավայրում, քանի որ շատերը կարծում են դրա օգտագործումը որպես այլընտրանք թղթի փոխարեն, հետևաբար, դա կվնասի երեխաներին սովորել գրել և կարդալ: Այնուամենայնիվ, ինչպես մյուս գործիքները, դրանք մեծ օգուտներ են տալիս ուսուցման գործընթացում[12]:

Վիրտուալ իրականությունը ինտերֆեյս է, որը տեխնոլոգիայի միջոցով ստեղծում է վիրտուալ տեսարան: Նմանակում է իրականության վրա հիմնված ձայնային, տեսողական և շոշափելի էֆեկտները՝ օգտագործողին թույլ տալով հավատալ, որ դրանք իրական միջավայրում են: Այն գործիք է ուսուցման բազմաթիվ հնարավորություններով: Կարելի է վերստեղծել հատուկ իրավիճակներ, որոնք թույլ են տալիս երեխաների մոտ տարբեր հմտությունների զարգացում:

Կրթության մեջ դրա օգտագործման օրինակներն են՝ ճանապարհորդել հեռավոր երկիր, կատարել լաբորատոր փորձեր, ուսումնասիրել մարդու մարմինը կամ ճանապարհորդել մարդկության պատմության մեջ:

Ծրագրային ապահովման հիմնական կատեգորիաները համակարգային ծրագրերն են, կիրառական ծրագրերը և ծրագրային ապահովման մշակման գործիքները: Համակարգային ծրագրերը, առաջին հերթին, ներառում են օպերացիոն համակարգեր, որոնք ապահովում են բոլոր մյուս ծրագրերի փոխազդեցությունը սարքավորումների հետ և անհատական համակարգչի օգտագործողի փոխազդեցությունը ծրագրերի հետ: Այս կատեգորիան ներառում է նաև ծառայողական ծրագրերը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային գործիքակազմի մեջ մտնում են նաև կիրառական ծրագրերը, որոնք ներառում են տեքստերի, գրաֆիկական, աղյուսակային և այլ տվյալների հետ աշխատելու տեխնոլոգիաներ:

Ժամանակակից կրթական համակարգերում լայն տարածում են գտել գրասենյակային կիրառական ծրագրերը՝ տեքստի մշակիչներ, աղյուսակներ, ներկայացումների պատրաստման ծրագրեր, տվյալների բազայի կառավարման համակարգեր, գրաֆիկական փաթեթներ և այլն:

Smart Notebook ծրագիրը: Այն բոլոր գործողությունները, որոնք կարելի է կատարել համակարգչի վրա, կարելի է կատարել էլեկտրոնային գրատախտակին: Իսկ ուսումնական նյութեր ստեղծելու համար օգնության եկավ *Smart Notebook* ծրագիրը, որը հնարավորություն է տալիս ստեղծել աուդիո և տեսադասեր: *Smart Notebook* ծրագիրը ոչ միայն տեղեկատվություն է փոխանցում սովորողին, այլ նաև ներգրավում է ինտերակտիվ ուսումնական պարապմունքին:

Կան մի շարք կրթական առցանց հարթակներ, գործիքներ, միջոցներ, որոնք խթանում են աշակերտների ուսման նկատմամբ հետաքրքրությունը, նպաստում են սովորել սովորելու կարողության զարգացմանը: Ժամանակակից առցանց հարթակները, որոնք նաև խաղային են, հատկապես տարրական դպրոցի աշակերտների համար ուշադրությունը կենտրոնացնելու, ուսման հանդեպ հետաքրքրություն առաջացնելու և լիարժեք ներգրավվածություն ապահովելու մեծ հնարավորություն են ընձեռում[13]:

Այժմ ներկայացնեմ այդ գործիքներից մի քանիսը:

Ուսումնական գործընթացն առավել հետաքրքիր, արդյունավետ դարձնելու համար մեզ այսօր կարող են օգնել մի շարք առցանց գործիքներ և հարթակներ՝ Kahoot, Playposit, Padlet, Quizizz, LearningApps, Google forms, Socrative և այլն:

Անդրադատմանը դրանցից մի քանիսին:

Kahoot, Quizizz, Socrative, Google forms առցանց գործիքները համաժամանակյա, առցանց եղանակով գիտելիքների ստուգման գործիքներ են: Այս ծրագրերի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց, միավորային գնահատում:

Ի տարբերություն Quizizz-ի և Socrative-ի, որոնք օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման համար նախատեսված «սենյակի» տվյալները, և յուրաքանչյուր սովորող պետք է անհատապես կիրառի համակարգիչ, հեռախոս կամ պլանշետ, Kahoot-ը օգտագործելիս սովորողները պետք է լինեն միասին նույն սենյակում և հետևեն մեկ ընդհանուր համակարգչին միացված պրոյեկտորին ու պրոյեկցիոն էկրանին[10]:

Սովորողները հետևում են հարցադրումներին և նշում պատասխանները: Այս գործիքները հեշտացնում են նաև ուսումնական հաստատության կառավարման գործընթացը՝ թույլ տալով վերլուծություններ կատարել դպրոցի ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսման որակի բարելավման ուղղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

SՀS-ի օգտագործումը արդարացված է, քանի որ այն թույլ է տալիս ակտիվացնել սովորողների գործունեությունը, բարելավել ուսուցչի մասնագիտական մակարդակը և բազմազանել միջանձնային հաղորդակցության ձևերը ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների միջև: Ժամանակակից կրթության մեջ օգտագործվող SՀS գործիքները թույլ են տալիս հասնել ուսումնառության բարձր արդյունքների: Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ապահովել ուսուցչի և սովորողի փոխգործակցությունը բաց և հեռավար ուսուցման համակարգում: Ուսումնական գործընթացում SՀS տարբեր գործիքների կիրառումը կարող է հանգեցնել ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքների: Ուսումնական գործընթացների վրա SՀS-ի ազդեցության տակ ձևավորվում է ժամանակակից ուսուցչի մի տեսակ, որը պետք է ոչ միայն գիտելիքներ ունենա տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում, այլ նաև կարողանա դրանք կիրառել իր մասնագիտական գործունեության մեջ: Այս պայմաններում ի հայտ է գալիս սովորողի այլ տեսակ, ով չի պատկերացնում իր կյանքը առանց անհատական համակարգչի և ինտերնետի՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները որպես տեղեկատվական աղբյուր: Բայց անհրաժեշտ է սահմանափակել տեղեկատվական ռեսուրսների հասանելիությունը, պայմաններ ստեղծել զարգացման տարբեր մակարդակներ ունեցող սովորողների ստեղծագործական և հետազոտական գործունեության համար:

SՀS-ի կիրառումը դասապրոցեսում

- ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան,
- հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա,
- իրականացնում է երկխոսություն ինֆորմացիայի աղբյուրի հետ,
- խնայում է ժամանակը,
- հնարավորություն է տալիս լսարանային կամ անհատական պարապմունքները դարձնել ավելի հետաքրքիր,
- ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահեստ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Ս.Մ. - Ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժական բուհի տեխնիկական առարկաների դասավանդման գործընթացում: Երևան, 2009, 152 էջ:
2. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., - Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2004, 188 էջ:
3. Беспалько В. П., Образование и обучение с участием компьютеров (педагогика третьего тысячелетия) / В.П.Беспалько. М.: Изд-во МПСИ, 2008, 352 с.
4. Киселев Г.М., Бочкова Р.В. – Информационные технологии в педагогическом образовании. Издательство: Дашков, 2012.
5. Բ.Ջանփոլադյան – Նոր կրթական տեխնոլոգիաներ: Երևան, 2009
6. Ա.Գ.Մանուկյան, Ա.Ն.Սարգսյան - «Ինֆորմատիկա»: Գյումրի, հեղինակային հրատարակչություն, 2010
7. Курин Ю.Н. Мультимедийные и гипермедийные технологии в реализации концепции эффективного изучения геометрии в начальной школе /Ю.Н.Курин// Начальная школа.-2005.
8. Колесникова Ю. А. Первое место - компьютеру. //Начальная школа плюс До и После. – 2007. - №7. – С. 34 – 37
9. Булатова - Топоркова, М.В. Педагогические технологии /М.В.Булатова-Топоркова. – М. : МарТ, 2006
10. Сергеев А. Н. Обучение в сообществах в контексте возможностей Интернета // Педагогика. – 2009
11. Селевко Г. К. Педагогические технологии на основе информационно-коммуникационных средств. //Москва, НИИ школьных технологий. – 2005
12. Суровцева И. В. Добываем знания с помощью компьютера. //Начальная школа плюс До и После. – 2007
13. Крапивенко,А.В. Технологии мультимедиа и восприятия ощущений: учебное пособие / А.В.Крапивенко. – М.: БИНОМ, Лаборатория знаний, 2009